Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Վարդանաշենի Մ. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի Շախմատի - 4 դասաժամ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է 2 փուլով ՝թեստավորման և հարցազրույցի :Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),

-մեկ լուսանկար 3x4 չափի ,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

-անձը հաստատող փաստաթուղթ

-«Հանրակրթության մասին» ՀՀօրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձև 5)

-այլ պետության քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փատաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենի հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք :

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2025թ. օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր ՝ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի սեպտեմբերի 12-ին՝ ժամը 15:00-ին ,
ՀՀ Արմավիրի մարզի Վարդանաշենի Մ. Մինասյանի անվան միջնակարգ դպրոցում,
հասցեն գ.Վարդանաշեն, 1-ին փ.24 շ.:
Տեղեկությունների համար զանգահարել ՝ 077 367673 հեռախոսահամարով: